

**ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ  
ԻՐԱՎԻՃԱԿԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄՍՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ**

**Աղիքային վարակիչ հիվանդություններ**

Հայաստանի Հանրապետությունում աղիքային վարակիչ հիվանդություններով պայմանավորված համաճարակային իրավիճակը հարաբերականորեն հանգիստ է:

2022թ. հուլիս ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 1250 դեպք, ինչը գրեթե նույնն է հունիս ամսվա հիվանդացության (1254 դեպք) հետ համեմատ, իսկ 2021թ. նույն ժամանակահատվածի համեմատ հիվանդացությունը նվազել է մոտ 1.1 անգամ:

2022թ. հուլիս ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների թվով 1 բռնկում, որի շրջանակում հիվանդացել է 7 անձ:

2022թ. արձանագրվել է աղիքային վարակների 8 բռնկում, որից 5-ը սննդային ծագման, 3-ը՝ ջրային: Սննդային ծագման բռնկումներից 3-ն արձանագրվել է Երևան քաղաքում (2-ը՝ հանրային սննդի կազմակերպություններում, 1-ը՝ այլ կազմակերպությունում), 1-ական բռնկում արձանագրվել է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում՝ դպրոցական կազմակերպությունների էքսկուրսիաների ժամանակ:

Բոլոր դեպքերում բռնկումներն առաջացել են սննդամթերքի պատրաստման, պահպանման կանոնների, ինչպես նաև սանիտարահիգիենիկ ռեժիմի խախտումների պատճառով:

Ջրային բռնկումներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 1 բռնկում և Գեղարքունիքի մարզում՝ 2 բռնկում: Բռնկումների առաջացման պատճառ է հանդիսացել խմելու ջրի երկրորդային աղտոտումը:

**Օդակաթիլային մեխանիզմով փոխանցվող վարակիչ հիվանդություններ**

ՀՀ-ում 2022թ. հուլիս ամսին արձանագրվել է սուր շնչառական վարակներով (ՍՇՎ) պայմանավորված ցածր ակտիվություն:

Նշված ժամանակահատվածում ՍՇՎ-ով պայամանվորված հիվանդացության ցուցանիշը ըստ 100000 բնակչի կազմել է՝ 339.6, ինչը նախորդ՝ հունիս ամսվա (ցուցանիշը ըստ 100000 բնակչի՝ 400.2) հետ գտնվում է գրեթե միևնույն մակարդակի վրա, իսկ նախորդ՝ 2021թ. միևնույն ժամանակահատվածի համեմատ՝ (ցուցանիշը ըստ 100000 բնակչի՝ 296.2) բարձր է՝ 1.1 անգամ:

Դետքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքում գրիպի վիրուսի հարուցիչներ չեն հայտնաբերվել: Այլ շնչառական վարակներից հայտնաբերվել են ռինովիրուս, պարագրիպ, ադենովիրուս, բոկավիրուսի, ռեսպիրատոր սինցիտիալ վիրուսի հարուցիչներ, ինչպես նաև 6 նմուշում հայտնաբերվել են կորոնավիրուսային հիվանդության SARS-Cov-2 հարուցիչներ:

### **Կորոնավիրուսային հիվանդություն**

2022թ. օգոստոսի 8-ի դրությամբ ՀՀ-ում արձանագրվել է կորոնավիրուսային հիվանդության 428648 դեպք (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 14486.2), որից՝ 2161-ը (0.5%) ստանում են բուժում, 416161 (97.1%) անձ առողջացել է, 8637 դեպքում (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 291.5) արձանագրվել է մահվան ելք, մահաբերությունը կազմում է 2%:

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 3283 դեպք (հ.գ. 110.9 դեպք ըստ 100.000 բնակչության), ինչը նախորդ 14 օրվա համեմատ (1594 դեպք, հ.գ. 32.3 դեպք ըստ 100.000 բնակչության) աճել է 106%-ով:

Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 23.6%, այնինչ նախորդ 14-օրյակում՝ 11.9%:

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 110.9 դեպք ըստ 100.000 բնակչության, իսկ թեստերի դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 23.6%, ինչը, ըստ Եվրամիության չափանիշների (<https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2021/06/14/covid-19-council-updates-recommendation-on-free-movement-restrictions/>), համարվում է «կարմիր գոտի»: 2 շաբաթ առաջ վերը նշված ցուցանիշները համապատասխանաբար եղել են 32.3 դեպք՝ ըստ 100.000 բնակչության և թեստերի դրական արդյունքների մասնաբաժինը 11.9%:

### **Քիմիական թունավորումներ**

Հայաստանի Հանրապետությունում հուլիս ամսվա ընթացքում արձանագրվել է քիմիական թունավորումների 326 դեպք, որոնց 31.9%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 68.1%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը՝ 35.6%-ը, արդյունք են թունավոր կենդանիների խայթոցի, 22.1%-ը՝ ակոհոլային թունավորումները՝ ակոհոլի բարձր չափաբաժինների ընդունման, 17.8%-ը՝ դեղամիջոցներով՝ ինքնաբուժման, ինքնասպանության և ծնողի անուշադրության հետևանքով առաջացած, 11.3%-ը՝ օրգանական լուծիչների,

մասնավորապես՝ շնու գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, 5.5%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 5.3%-ը՝ թունաքիմիկատներից, 1.8%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից, 0.3%-ը խոտաբույսերից, 0.3%-ը թմրամիջոցներից:

2022թ. հուլիս ամսին քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը աճել է 1.2 անգամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

### **Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ**

Հայաստանի Հանրապետությունում 2022թ. հուլիս ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր արտաընդերային վիրուսային հեպատիտների հիվանդացության ցուցանիշը չի փոխվել:

Սույն թվականի հուլիս ամսին սուր արտաընդերային վիրուսային հեպատիտի դեպք չի արձանագրվել:

### **Ջոնոզ և մակաբուծային հիվանդություններ**

Հանրապետությունում 2022թ. հուլիսին հատուկ վտանգավոր վարակների՝ սիբիրյան խոցի, լեպտոսպիրոզի, կատաղության, տուլարեմիայի և բրուցելլոզի դեպքեր չեն արձանագրվել: Հանրապետությունում 2022թ. հուլիսին հանգիստ է եղել նաև մալարիայի համաճարակային իրավիճակը, բերովի դեպքեր չեն արձանագրվել:

2022թ. հուլիսին արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 2 դեպք՝ Տավուշի և Կոտայքի մարզերից: 2022 թվականի ընթացքում արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի ընդամենը 7 դեպք:

2022թ. հուլիսին գրանցվել է Լայմի հիվանդության 1 դեպք՝ ք. Երևանից: Տգերով փոխանցվող այլ հիվանդությունների, այդ թվում՝ Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդի, անապլազմոզի, ոփկետցիոզների տարածման վտանգը բարձր է՝ կապված տզերի բնական տարածագոտիների ընդլայնման և սահմանամերձ տարածքներից վարակի ներբերման վտանգի հետ: 2022թ. հուլիսին հանրապետությունում ասկարիդոզով հիվանդացության ցուցանիշը նվազել է՝ կազմելով 4.7 (138 դեպք), որը 2021 թվականի հուլիսին գրանցվել է 6.2: 2022թվականի հուլիսին հանրապետությունում արձանագրվել է տոքսոկարոզի 2 դեպք: 2022

թվականի հուլիսին արձանագրվել է էնտերոբիոզի 133 դեպք, հիվանդացության ցուցանիշը կազմել է 4.5 (2021 թվականի հուլիսին գրանցվել է 5.4):

Նախակենդանիներով պայմանավորված հիվանդություններից՝ 2022թվականի հուլիսին արձանագրվել է տոքսոպլազմոզի 1 դեպք (0-2 տարեկանների տարիքային խմբում): Ամեոբիազի, ժիարդիազի և կրիպտոսպորիդիոզի դեպքեր հուլիսին չեն արձանագրվել:

### **Կառավարելի վարակիչ հիվանդություններ**

17.08.2022թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է, մասնավորապես՝ 2022թ. ընթացքում չեն գրանցվել պոլիոմիելիտի, դիֆթերիայի, փայտացման, կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարոտիտի, կապույտ հազի, հարկապույտ հազի դեպքեր: Գրանցվել է մենինգակոկային մենինգիտի սպորադիկ 4 դեպք՝ չպատվաստված անձանց շրջանում, տուբերկուլոզային մենինգիտի 1 դեպք, ինչպես նաև պատվաստումներով չկանխարգելվող այլ մանրէային մենինգիտի 10 դեպք: